

ԳՅՈՒԼԱՍԱՐՅԱՆ ՀՐԱՆՏ

ԿՈՐՈՒՄՏ

Անհայտ՝ որպես ճակատագիր ու գալիք,
Մեկը ահա հեռանում է լեռներով,
Ինքը իր հետ, ինքը իր մեջ ծանր ու լի՝
Տարիների ու ցավերի բեռներով:

Մեկը ահա ձուլվեց մութին, գիշերին:
Ո՞վ է արդյոք. ուրվակա՞ն է, թե ստվեր,
Ո՞ր է գնում. դեպի կա՞նչը հուշերի,
Թե ուզում է հոգս ու ցավից ազատվել:

Այնպես տխուր, այնպես մենակ նա գնաց,
Ու ոչ մի հույս արթնացումի ու դարձի,
Ու՞ր կհասնի այսպես խռով ու հոգնած՝
Սիրտս հանձնած տառապանքին ու լացին:

ՎԵՐԱԴԱՐՁ ՉԿԱ

Դեղին, մշուշոտ անհունից ահա
Ինչ-որ ձայն կամաց ներս է լցվում տուն:
Ո՞վ է – հոգու մեջ պատկերս պահած –
Առաջվա նման դեռ ինձ կարոտում:

– Վերադարձ չկա՞, – ասում եմ ես ինձ, –
Ճանապարհներին խավար է իջել,
Մի անասելի, անհույս մի թախիժ
Ծանրացավ իմ ու անցյալի միջև:

– Վերադարձ չկա՞, – ասում եմ ես ինձ, –
Ու թանձրանում է լռությունը խուլ,
Եվ ահագնացող այս խլությունից
Թախիժը կորած դեմքեր է փոխում:

Ինչ պատկերներ էլ որ իմ մեջ շողան,
– Վերադարձ չկա՞, – կրկնում եմ ես, –
Նրանք վերստին անցյալ կլողան
Դատապարտյալի ու կորածի պես:

Կլողան, մենակ կմնամ հետո
Թախիժի, լռության ու այդ ձայնի դեմ:
Ո՞վ է ինձ, տեսնես, հիշում կարոտով,
Կամ թե անունս ո՞վ է տալիս դեռ: